

Հ. Ա. Խ. Հ. ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏ - ԱՅՊԵ-ԳԻՒԵԳՈՐԾՎԱՆ ԶՈՆԱԼ ԳԻՏԱ-ՓՈՐՁԱԿԱՑՄԱՆ

Պրաֆ. Ն. Ն. ՊՐՈՍՏՈՍԵՐԴՅՈՎ,

# ԽԱՂՈՂԻ ՅՅՈՒԹ.



634  
Դ-89

ԳԵՐԵԴՀՐԱՄ

1984

ՅԵՐԵՎԱՆ

23.07.2013

19.677

24 Ser 410

2. Ա. Խ. Հ. ՀՈՊԱԿՈՄԱՏ—ԱՅԻՆ-ԳՐԱՆԳՈՐԾՎԵԼ ԶՈՒԱ. ԳԻՏԱ-ԺԱՐԱԿԱՑՈՒ

634 9-39 up.

## Գրք. Ն. Ն. ԳՐՈՒՏՈՍԵՐԴԻՆ.

ԱՂՈՂԻ ՀՅՈՒԹԸ, ՆՐԵՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ,

四

# ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

4010 3014  
42102



1934

## ՅԵՐԵՎԱՆ

ԽԱՂԱՀՅՈՒԹԻ ՅԵՎ ԽԱՂԱՂԻ ՍՆՍԴՅԻՆ ՈՒ ՀԱՄԻ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև հեղափոխությունը խաղողը՝ գլխավորապես ոգտագործվում եր գինի ոլատրաստելու համար:

Սեղանի խաղողագործությունը քիչ եր զարգանում:

Բացի գինուց, խաղողից պատրաստվում եր միայն չամիչ (Թուրքեստան), խտացրած նյութեր (բաքմազ կամ դոշաբ) և զանազան նյութեր, ինչպես որինակ՝ սուջուխ, վորը հաճախ միայն տեղական նշանակություն եր ունենում:

Ե. Միության մեջ խաղողի նկատմամբ յեղած տեսակետն այժմ միանգամայն փոխվել եւ Այժմ խաղողի վրա նայում են վոչ միայն վորպես հումույթ՝ գինի ստանալու համար, այլ գլխավորապես, վորպես սննդանյութ, ինչպես ինքնին վերցրած, այնպես ել նրանից պատրաստված անալիոնով նյութերը:

Իր սննդի և համի հատկություններով խաղողը մյուս պառողների և հատապառների շարքում շատհզնահատելի յեւ, դրա համար ել նա պետք եւ ծառայի վոչ միայն վորպես քաղցրեղեն, այլ նաև աշխատավորության ընդհանուր սննդի լրացուցիչ մասը պիտի կազմի: Նրա գործածությունը պետք եւ աճի և խաղողով պետք եւ ապահովված լինեն առաջին հերթին արդյունաբերական ու բանվորական խոշոր կենտրոնները:

Թե մեղ մոտ վորքան քիչ եւ թարմ խաղողի գործածությունը, այդ ցույց եւ տալիս հետեւյալ համեմատությունը. այն ժամանակ, յերբ Հ. Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության միավորին (անձի նորմա) ընկնում եւ մոտ 9,5 կիլո խաղող, մեղ մոտ ֆնակից ել քիչ եւ ընկնում, իսկ հյուսիսային շրջաններում ել ավելի քիչ:

Մեր խաղողի արդյունաբերության զարգացումը, առաջին հերթին սեղանի խաղողների զարգացումը, նախատեսում եւ շրջ հնգամյակի վերջում մի անձի խաղողի գործածության նորման մինչև 9 կիլոյի հասցնել:

Թեև խաղողը տեղափոխելու այժմյան յեղանակներով (հատուկ սառցնող վագոններում, նախորոք սառցարաններում պահե-

Գտտ. իւրագիր՝ Ակա. Բակունց  
Քարգանեց՝ Ան. Տեր-Միքայելյան  
Լեզվ. խմբ. Հ. Հարուբյանյան  
Սբբագրիչ՝ Խ. Այվազյան  
Հանձնված եւ արտադրության 1934 թ. ապրիլի 9-ին,  
ստորագրված եւ առաջընթաց 1934 թ. մայիսի 10-ին  
Գլավիս № 9273, Պատվեր № 287. Տիրաժ 1500

ՏերեՎԱՆ, ԳԵՐԻԿԱՑԱՏԻ ՏՊՄԱՆ, ԽԱՐԱՌԵԴՑԱՆ և 50

լով) յերկար ժամանակ, առանց փչանալու կարող ե հետու վայրեր տարգել, սակայն ել ավելի նպատակահարմար ե նրանից պատրաստել անալկոհոլ մթերքներ, վորոնք առանց փչանալու կարող են պահպել յերկար ժամանակ: Այս մթերքները մի քանի կողմերով նույնիսկ գերտղասելի բն թարմ խաղողից:

Խտացրած խաղողայութը (դոշաբը), վորն ավելի խտացած վիճակում կոչվում ե «քաղղողի մեղր», փոխարինում և շաքարին, իսկ խաղողի հյութերն ունեն նույն կազմությունը, ինչ, վոր ունի թարմ խաղողի հյութը՝ առանց մաշկի և կորիզների:

Այս գրքույկում մենք խոսելու յենք միայն խաղողի հյութի մասին:

## ԽԱՂՈՂԻ ՀՅՈՒԹԻ ՍՆԴԳՅԱՅԻՆ ՅԵՎ ՀԱՄԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Խաղողի հյութի սննդատու հատկությունները գնահատելու համար պետք ե իմանալ, թե ինչ մասերից ե կազմված այն (իմանալ նրա քիմիական կազմությունը):

Խաղողի հյութը հեղուկ ե (ջրիկ), վորի մեջ լուծված են զանազան նյութեր, մի լիար հյութի մեջ գտնվում 150—280 գր. և ավելի: Խաղողի հյութի ամենազիստավոր բաղադրիչ նյութը շաքարն ե:

Խաղողաշաքարը տարբերվում ե մեր սովորական գործածական ճակնդեղի շաքարից և կազմված ե յերկու շաքարանյութերից: Նրանցից մեկը կոչվում է Գլյակոզ (կամ «խաղողաշաքար»), յուրաքանչյուրը՝ Ֆրուկտոզ (կամ «պտղաշաքար»):

Ֆրուկտոզան, վորից շատ կա մեղրի մեջ, ավելի քաղցր և գյուկոզայից (ավելի քան 2 անգամ) և ճակնդեղի շաքարից (ավելի քան  $1\frac{1}{2}$  անգամ):

Հասունացած խաղողի, ինչպես և նրանից պատրաստած հյութի մեջ, գյուկոզան և ֆրուկտոզան սովորաբար գտնվում են համարյա նույն քանակությամբ:

Զայայած նշեցինք, վոր խաղողի շաքարը տարբերվում ե մեր սովորական գործածական ճակնդեղի շաքարից, բայց որդանիքմի համար յերկուսն ել նույն նշանակությունն ունեն:

Բանն այն ե, վոր ճակնդեղի շաքարն ել մեր որդանիքմում տարբարութվում և գոյանում ե ճիշտ նույն գյուկուզան և ֆրուկտոզան, վորոնք գտնվում են խաղողի պտղի մեջ, և այն ել՝ ճիշտ նույն հարաբերությամբ, ինչպես և խաղողի մեջ ե (կեսը ֆրուկտոզա, կեսը գլյուկոզա):

Այսպիսով, յերբ ճակնդեղի շաքարը մտնում ե արյան մեջ,

վորպեսպի նրա հոսանքով տարածվի մեր բոլոր որդաններում, այնտեղ արդեն նա հանդես ե գալիս վորպես հավասար չափով գյուկոզայի և ֆրուկտոզայի խառնուրդ:

Շաքարը հսկայական նշանակություն ունի որդանիքմի համար, վորովինետև ծառայում ե վորպես յուրահատուկ վառելանյութ՝ կենդանի մեքենայի մեջ: Այսպես, նրա շնորհիվ են կծկվում մեր մկանները, հետեաբար, նրա շնորհիվ ե կատարվում ամեն տեսակի աշխատանք:

Խաղողի մեջյեղած շաքարի քանակը տարբեր ե և կախված ե խաղողիտեսակից, հասունության աստիճանից և հողային ու կիմայական պայմաններից, ինչպես և վազի մշակման ձևից:

Մեր տեղական փոփոխակներից խարջին և ճիլաբը միշտ քաղցր են, որինակ՝ մսխալուց կամ ասկյարուց:

Հարավում խաղողը սովորաբար ավելի քաղցր ե: Այն փոփոխակները, վորոնք հյուսիսային շրջաններում վորոշ քանակի շաքարայնությունը ունեն, յեթե տեղափոխվում են հարավ, նրանց շաքարայնությունը բարձրանում ե: Այս և պատճառը, վոր հարավում գինիներն ավելի ուժեղ են (թունդ), քան հյուսիսային շրջանների գինիները:

Այսպիսորինակ, այն ժամանակ, յերբ կախեթի տեղական սապերավի տեսակն ունի 21—22 տոկոսից վոչ ավելի շաքարայնություն, Հայաստանում նրա շաքարայնությունը հասնում է 27 տոկոսի և ավելի բարձր:

Այն հանդամանքը, վոր հարավում միշտ խաղողն ավելի շաքարային ե, բացատրվում ե լույսի և տաքության առատությամբ, վորոնց ազդեցության տակ շաքարը գոյանում ե խաղողի վազի տերևների մեջ, վորպեսպի հետա անցնի պտղի մեջ:

Անա այն շաքարայնությունը, վոր ունեն մեր գլխավոր տեսակները՝ լրիվ հասունացած վիճակում,

Խարջի . . . . .	25—27,9 %
Ճիլաբ . . . . .	25,0—27,7 %
Մսխալի . . . . .	21,5—21,7 %
Կախեթ . . . . .	22,2—
Ամկյարի . . . . .	23,5—
Հաչաբաշ . . . . .	18,2—

Բոլոր պտուղներից ամենաքաղցրը խաղողն ե:

Սննդատվության տեսակետից խաղողի և նրա հյութի մեջ մյուս կարևոր մասերը բրփուներն են: Թթվաւտները նյութեր են,

վորոնք ծանոթ են բոլորին իրենց թթու համով, ինչպես որինակ՝ քացախաթթուն կամ ծծմբաթթուն: Ինչպես վոր շաքարներն են իրարից տարբերվում, այնպես ել զանազան թթվուաններն են տարբերվում իրարից:

Խաղողի մեջ գերակռում են խնձորաթթուն և գինեթթուն:

Մյուս թթվուաններից, վորոնցից շատ սակագ ե գտնվում, կարելի յե նշել կիտրոնաթթուն: Խնձորաթթուն ծանոթ ե իր խնձորի համով, վորտեղից և ստացել ե իր անունը:

Դինեթթուն լավ հայտնի յի բոլոր գինեգործներին, վորովհետու գինին պահելու դեպքում տակառների վրա կաղմում ե այսպես կոչված գինու քար և այս կոչումը ստացել ե խաղողից:

Կիտրոնաթթուն գերակռում ե կիտրոնի (լիմոնի) մեջ և նրանից ել ստացել ե իր անունը:

Այս բոլոր թթունները, մաքուր վիճակում արտադրված պինդ մարմիններ են և գոյացնում են ուղիղ թափանցիկ բյուրեղներ, հակառակ հեղուկ թթունների, ինչպիսիք են որինակ՝ ծձբմբաթթուն կամ քացախաթթուն:

Թթուններն իրենց համով աարբեր ուժ ունեն: 2 գլխավոր թթուններից ավելի ուժեղը գինեթթուն ե:

Խաղողի թթունները գտնվում են կամ ապատ վիճակում (առանձնապես խակ խաղողի մեջ ապատ թթուններ շատ կան) կամ կիսակապակցված՝ միացած հանքային նյութերի հետ:

Մեր սեղանի աղին նման միացությունները կոչվում են աղեր:

Այսպիս գինու քարը, վորը նստում ե տակառների վրա, գինեթթի աղն ե, խիտ դրոժից և չեչից ստացվածը՝ գինեթթի բյուրեղային-կրային աղն ե:

Աղերից կարելի յե նորից ստանալ ապատ թթուններ:

Խաղողի և նրա հյութի թթվությունը, բացի համն զգալուց, կարելի յե վորոշել նաև քիմիական ձանապարհով: Քանի վոր խաղողի ամենաբնորոշ թթուն գինեթթուն ե, ապա նրա թթվությունն արտահայտվում ե 1 լիտրին ընկող գրամներով, այսինքն՝ մի լիտր հյութի մեջ քանի գրամ թթուններ կան՝ վերածված գինեթթի:

Ցենթաղրենք թե խաղողի հյութն ունի 6 թթվություն, այդ նշանակում ե, վոր 1 լիտր հյութի մեջ կա 6 գրամ գինեթթու (սակայն իրականում միայն գինեթթու չե):

Խաղողի թթվությունը եւ, ինչպես շաքարայնությունը փոխվում ե նրա համունացման ընթացքում:

Խայած հասունացման աստիճանին, թթվությունը տատանվում է 3—28: Հարավում սովորաբար խաղողն ավելի քիչ թթվություն ունի:

Հասունացման հետ թթվությունն իջնում է և հասուն վորոշակի մակարդակի: Այսպես՝ սակյարի խաղողը 1932 թվի ոգոսասուի 21-ին ուներ 7,6 թթվություն, իսկ սեպտեմբերի 21-ին միայն 5,7 թթվություն:

Յերբ խաղողը թառամում է, նրա թթվությունն ավելանում է, վորոշինեակ գուրցիցման հետևանքով, նրա պաղի մեջ նյութերը խտանում են: Թթունները գործադրվում են խաղողի շնչառության ժամանակ, ըստ վորում, ավելի շատ շարադրանշվում են խնձորաթթուն քան թե գինեթթուն:

Բացի շաքարներից և թթվուաններից՝ մեծ նշանակություն ունեն նաև արապես ասած՝ հանքային նյութերը: Հանքային են կոչվում այն նյութերը, վորոնցից կաղմած են հանքերն ու լինային տեսակները, սակայն նրանք մտնում են նաև բույսերի ու կենդանիների կաղմածքի մեջ, ինչպես որինակ՝ կերը, գիպուր, սողան և այլն: Իրենք՝ հանքային նյութերը ես բարդ կաղմածք ունեն և աղեր: Հանքային նյութերը մեծ առաջացնում են այն, ինչ մենք կոչում ենք աղեր: Այսպես որինակ՝ գինու քարը գինեթթի կալիումական աղն ե:

Խաղողայութի և խաղողի մեջ գտնվում են հենց այն հանքային նյութերը, վորոնք հարկավոր են ինչպես մեր մարմնի սննդառության, այնպես ել մեր որգանների ձիշտ գործունեյության համար: Հանքային նյութերի սակավությունը կամ նրանց անկանոն բաշխումն առաջացնում ե մի շաբք հիվանդություններ (որինակ՝ բախիտ, սկլերոզ):

Բացի հանքային նյութերից, խաղողի մեջ ուրիշ շատ նյութեր ել կան:

Խաղողի հյութի կաղմությունը շատ բարդ ե. Խաղողին բուրմունք ավող նյութերը (որինակ՝ մուսկատացին տեսակների մուսկատի հոտը) և գույն ավող նյութերը (հատիկների գեղնավոսկույն և կապույտ գույները) խաղողի հյութը դարձնում են գեղեցիկ ու դուրեկան:

Մեր որգանիզմը կարիք ունի, այսպիս կոչված՝ սպիտակուցային նյութերի, վոր ստանում ե գլխավորապես մսեղեն սնունդից:

(բայց նաև բուսական սնունդից, վորոնցից սպիտակուցով առանձ-նապես հարուստ են սիսեռը, լորին, սոյան):

Խաղողի հյութը հարուստ չե սպիտակուցային նյութերով. այդպիսիք ափելի շատ կան նրա պատյանի (կճեպի) մեջ, և այս տեսակետից խաղողը զիջում ե կաթին:

Վերջապես պետք ե հիշել նաև մի շաբթ այլ նյութերի մասին, վորոնց նշանակութիւնը վերջին ժամանակներու և միայն պարզված: Դրանք, այսպես կոչված՝ վիտամիններն են: Բանից դուրս ե գալիս, վոր մեր սնունդն անբավարար կլինի, յիթե նույնիսկ ընդունենք մեզ անհրաժեշտ սպիտակուցային, ճարպացին, շաքարային, հանքարային բոլոր սննդանյութերը: Դրանց հետ միասին մեր որդանիզմին հարկավոր են, թեկուզ չնշին չափով, այդ ըստուցիչ «վիտամինները»: Կան մի քանի վիտամիններ, ֆրանցից մեկի բացակայությունն առաջնում ե ցինգահիմանդրությունը, մյուսինը՝ բախիս, յերրորդի բացակայության դեպքում աճումն ե կանգ առնում և այն:

Վիտամիններ կան շատ պատուղների մեջ (որինակ նարինջը), կամ բանջարեղեններում (պամիզոր) և կամ կանչեղենի մեջ ծներուկ): Վիտամիններ կան նաև խաղողի հյութի մեջ: Ինչպես վերև ասացինք, խաղողի հյութը զանազան նյութերի լուծույթ է ջրի մեջ: Ինքը՝ ջուրը ևս պետք ե որդանիզմին: Մարգն որդան մեջ  $2\frac{1}{2}$  լիտր ջրի կարենք ունի: Մոտ 1 լիտր ընդունում ե պինդ սննդի միջոցով, մեր գործածած բուրոր սննդանյութերի մեջ ջուր կա: Մնացած  $1\frac{1}{2}$  լիտր ջրի պակասը մենք լրացնում ենք խմելու ջրի միջոցով և զանազան խմիչքներով: Այդ ջրի պակասը կարող ե լրացնել նաև խաղողի հյութը: Սակայն այստեղ պետք է նշել, վոր մեր ծարավը հագեցնելով խաղողով կամ խաղողի հյութով մենք միաժամանակ ընդունում ենք զանազան սննդայութեր, այն ել վոչ թե վորպես գեղ, այլ վորպես համեղ խմիչք, կամ սննդարար ու հյութալի պտուղ:

### ԽԱՂԱՐԾ ՎՈՐՊԵՍ ԲՈՒԺԻՉ ՄԻԶՈՅ

Խաղողը և խաղողի հյութերը վոչ միայն դուրեկան, զովացուցիչ նյութեր են, այլև բուժիչ միջոց:

Խաղողից, վորպես բուժիչ միջոց, ոգտվել են դեռ հին գարերում, սակայն անդիտակարար:

Խաղողի բժշկությունը գիտական հիմունքներով սկսվել է կիրառվել անցյալ դարու կիսերից:

Մեզ մոտ նա ամենից առաջ զարգացել է Նրիմում (Յալտա): Այժմ շատ վայրերում ե կազմակերպվում խաղողի կուրող-տային բժշկությունը:

Այդ բժշկությունը կիրառվում ե նաև և. Միության շատ կլինիկաներում, սանատորիաներում և հիվանդանոցներում:

Պտուղն ոգտագործելու միջոցով խաղողի բժշկություն կատարելու ժամանակը սահմանափակ ե, այդ հնարավոր և այն ժամանակի, յերբ կա հասունացած խաղող և այն ել՝ միայն հարավում, ուր խաղողն աճում ե ( $2\frac{1}{2}$  ամիս):

Սա սովորաբար զուգադիպում ե, այսպես կոչված, կլիմայական բուժմանը, այսինքն՝ յերբ հյուսիսային վայրերից բուժվելու յեկած հիվանդներն ոգտվում են հարավի ջերմությունից, արևից, լողարաններից, արևելքանաներից, արևելք վանանաներ են ընդունում և զորոնում:

Խաղողի խոշոր, հյութալի և բուրավետ հատիկներով սնվելն ավելի մեծ բավականություն ե պատճառում, բայց նա ունի նաև մի շաբթ անհարմարություններ. Խաղողով բժշկվողը համեմատաբար մեծ քանակությամբ խաղող ե ուտում (մինչև 4—5 կիլո): Այս դեպքում հիվանդն ստիպված ե լինում ծամել խաղողի խոշոր մասսա, վորը հոգնեցնում ե նրա ծամող որդանները և փչացնում ե ատամները: Բացի այդ, ծամելու ընթացքում կուլ ե գնում ողը, ձգվում ե ստամոքսը, մյուս կողմից, խաղողի պատյանի (կճեպի) վրա գտնվում են զանազան միկրոօրգանիզմներ, վորոնց մեջ պատահում են միայն մանրադիտակով տեսանելի, յերբեմն հիվանդաբեր կենդանի որդաններից: Մրանցից կարելի յե աղատվել միայն խաղողը խնամքով, մաքուր ջրով փանալով, վորը միշտ չի կատարվում: Բացի այդ, խաղողն որեցոր փոխում ե իր կազմությունը, այնինչ բժշկական կիրառման համար ցանկալի յե, վոր նրա բաղադրությունը չփոփոխվի և բժշկի ճշառությամբ իմանա նրա բաղադրությունը: Բայց խաղողի բժշկության ամենաթերի կողմն այն ե, վոր այն հնարավոր և վոչ թե ամեն տեղ, այլ միայն այգեգործական շրջաններում, այն ել միայն կարձ ժամանակամիջոցում: Խաղողի հյութերը, ընդհակառակը, չունեն այդ բոլոր թերությունները, նրանք ունեն վորոշակի բաղադրություն և նրանցից ոգտվելը հնարավոր և կլոր տարին ու ամեն տեղ՝ ուր ցանկանատ:

### ԲՃԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՐԾ

Ի՞նչ դեպքում ե կիրառվում խաղողով բժշկությունը, լինի այն հյութով, թե թարմ խաղողով Խաղողը չի ոգնում ծանր հի-

վանդությունների գեպքում (որինակ՝ հնացած պալարախտ, ստամոքսի խոցեր, ուակ և այլն), բայց նա ոգնում և որդանների խանգարումների գեպքում, այսինքն՝ նյութափոխանակության հիվանդությունների և ծանր հիվանդությունների սկզբնական շըջանում (ստամոքսի, աղիքների, յերիկամների): Բացի այդ, խաղողի բժշկությունը հաջողությամբ կիրառվում է բժշկության հյուծիչ միջոցներից հետո (բուժումն ցեխերով, հանքային ջրով և այլն): Վերջապես, կիրառվում է ծանր հիվանդություններով տառապած հիվանդներին կազդութելու համար: Խաղողը և նրա հյութերն ոգտակար են նաև յերեխանեցի համար:

Խաղողի հյութով կամ խաղողով բժշկվելիս՝ պահպանվում են վորոշ կանոններ: Ամենից առաջ բուժումն անպայման պետք է կատարվի բժշկի հսկողության տակ: Բժշկվողն առաջուց կարգի յե զցում իր ատամները, վորոնք մաքրվում են նաև ամեն անդամ խաղող ընդունելուց հետո: Ուտելիք խաղողի ամենորյա չափն ավելացվում է աստիճանաբար: սկսում են 300 գրամից և հասցնում 2 կիլոյի և ավելի (1 կիլո հատապտուղը տալիս ե մոտ 750—800 գր. հյութ): Սովորաբար խաղողի որական չափը բաժանվում է 3 մասի: տրվում ե՝ անոթի, 2 ժամ ճաշից առաջ և 3 ժամ ճաշից հետո, կամ տրվում է 2 նվազում՝ անոթի և ճաշից 2 ժամ առաջ: Խաղողի բժշկության ժամանակ ոգտավետ են չնոդնեցնող զբոսանքները (30—45 րոպե), լողանարուց և արեի վանսա ընդունելուց հետո: Սննդի միջ ես սահմանվում են վորոշ կանոններ (պահեցողություն). խուսափում են կաթնամթերքից, սպիրտային և զազային խմիչքներից, հանքային ջրերից: Ամբողջ բժշկությունը տեսում է 4—6 շաբաթ, հատուկ պայմաններում (հյութեր) ել ավելի:

### ԽԱՂՋԻ ՀՅՈՒԹԻ ԽՄՈՐՈՒՄԸ

Խաղողի հյութն ունի նույն հատկությունները, ինչ վոր խաղողը, միայն ափելի խտացրած վիճակում: Բայց բավական է հյութը մի քիչ ժամանակ թողնել բաց, վոր նա սկսի խմորվել, հեղուկը պղտորվում է, շարժման մեջ մտնում, նա փրփրում է, կարծես յեփում է: Հյութի քաղցր համը քիչ-քիչ վերանում է, շաքարի փոխարեն հանդես է գալիս սպիրտը, խմորման վերջում հատակին կուտակվում է կեղտանման նստվածք, հյութը վեր և ածվում գինու:

Վորպեսզի հյութից ոգտվենք այնպես, ինչպես թարմ խա-

ղողից, հարկավոր նրան պաշտպանել խմորումից:

Ի՞նչ անել, ի՞նչպես ստանալ այդպես գիմացկուն, կամ ի՞նչ պես ասում են պահածո հյութ:


Վորպեսզի այդ խնդիրը վորոշնք, ամենից առաջ պետք է գիտենանք հյութի կրած փոփոխությունների պատճառը, այց կերպ ասած՝ իմանանք, թե ինչու յե հյութը խմորվում: Այդ պատճառը մեզ լավ հայտնի յե. հյութը խմորվում է, վարովինեան նրա մեջ ընկնում են զրոժները, (շաքարասնկեր), խմորասնկեր) վորոնիք և առաջացնում են խմորումը: Բայց ի՞նչ են իրենք՝ այդ դրոժները: Դրանք հասարակաչքով անտեսանելի, մանրադիտակով տեսանելի փոքրիկ սնկիկներ են: Մանրադիտակի տակ զրոժները ձվիկների տեսք ունեն: Առանձին դրոժային սնկիկներն այնքան փոքր են, վոր մի կաթիլ հյութի մեջ գտնվում են մի քանի տասնյակ միլիոն: Այստեղից կարելի յե յերևակայել, թե վորքան շատ կլինեն նրանցից 40 դույլանոց տակառում:

Քանի վոր դրոժային սնկերը կենդանի բույսեր են, ապա նրանք ել, ինչպես բոլոր կենդանի եյակները, շնչում, սնվում և բաղմանում են: Չնայած նրանք շնչում են ողով, բայց կարող են ապրել նաև տանց ողի, ինչպես շատ ուրիշ միկրոսկոպիկ եյակներ: Նրանք շնչում են ի հաշիվ այն շաքարի, վոր վեր և ածվում սպիրտի և գաղի: Դա նույն գաղն է, վարն արտադրվում է մեր շնչոտության ժամանակ, այրման ընթացքում, կամ հանքային ջրերից (որինակ՝ արգնի, նարզան) և կոչվում է ածխաթթու:

Դրոժային սնկերը սնվում են հյութի մեջ լուծված զանազան նյութերով: Նրանք բազմանում են հետեւյալ ձեռով դրոժային սնկերը բազմանալիս գոյացնում են բողբոջներ, այդ բողբոջներն աստիճանաբար մեծանում են և հասնում նորմալ չափի, հաճախ նրանք չեն անջատվում, այլ մնում են միացած: Այդ գեռ քիչ է, հասուն բողբոջներն ել իրենց հերթին առաջացնում են նոր բողբոջներ և սրանք են կարող են մնալ առանց անջատվելու: Այս դեպքում դրոժային սնկիկներն առաջացնում են մանրիկ շլթաներ, բոլորիս հայտնի համրիչների նման: Նկարում ցույց ե տըրքած թե ինչ ձեւ ունեն գրոժային սնկերը խոշորացրած վիճակում՝ մանրադիտակով ուսումնասիրելիս (տես նկար № 1):

Բացի բողբոջումից, ինչպես կոչվում է գրոժային սնկերի բազմացման վերը նկարագրված ձեւը, նրանք բազմանում են նաև, այսպես կոչված՝ սպորներով: Այդ սպորները փոքրիկ գըն-

դիմութեր են, վորոնք տռաջանում են դրոժային սնկի ներսում, ուր սովորաբար գոյանում են մինչև 4 այդպիսի սպորներ: Սպորները կարող են զարդանալ և տարածվել ամեն կողմէ: Նրանք առվելի փոքր են, քան իրենք՝ դրոժային սնկերը: Դրոժային սունկը սպորներ ե առաջացնում աննպաստ պայմաններում գտնվելու դեպքում, յերբ սննդանյութերը պակաս են, ջերմաստիճանը ցածը ե, կամ բարձր և այլն: Սպորները հեշտությամբ են դիմանում այդ աննպաստ պայմաններին և վորովնետև նրանք շատ փոքր են, դրա համար ել տարածվում են հսկայական տարածության վրա: Սպորից կարող ե աճել դրոժային սնկիկ: Թե ի՞նչ տեսք են ունենում սպորները մանրադիտակի տակ, յերևում ե նկարում (տես նկար № 2):




Նկ. 1. Բողբոջվող շաքարասնկերը մանրադիտակի (միկրոսկոպի) տակ

Մենք գիտենք, վոր խաղողայութն ինքն իրեն չի կարող խմորվել: Դրա համար հարկավոր ե, վոր նրա մեջ ընկնեն դրոժային սնկիկներ: Բայց ի՞նչպես են նրանք ընկնում հյութի մեջ: Հետազոտությունները ցույց են տալիս, վոր խաղողը հավաքելու ժամանակ նրա պատյանների վրա գտնվում են խոշոր թվով դրոժային սնկիկներ: Հաշվել են վոր 100 պտղի (հատկի) վրա լինում և 22,000,000 դրոժային սունկ: Ավելի շատ լինում են

պտառված պտուղների վրա, վորտեղ առաջացնում են խմորվող հյութեր և բազմանում են խիստ արագ (100 պտղին 800,000,000 սնկիկից ավելի): Դրոժային սնկիկները բաղմանում են անսովոր արագությամբ: Մայրականի հասած բողբոջի տռանձնացումը աեղի յե ունենում 10—15 ըովե անց՝ հաշված նրա ծագման ժամանակից: Մի դրոժային սնկիկն որվա մեջ կարող ե առաջացնել իր նման մի քանի միլիոն սնկիկ:

Դրոժներն ամենից լավ զարդանում են 25—30° տաքության մեջ: 35°-ից բարձր տաքության մեջ նրանք վնասվում են, 40—42°-ում խմորումը դադարում է, 60—65° խոնավ միջավայրում դրոժները վոչնչանում են 10—15 ըովե տաքացնելիս, իսկ չոր-



Նկ. 2. Սպորավորված շաքարասնկեր

դրության մեջ՝ 115°-ում: Դրոժները գտնվում են խաղողի պտուղների վրա, զանազան մրգերի վրա, հողում և ողում, միայն խաղողի հավաքից առաջ և վորոշ ժամանակ հավաքից հետո: Հունիսին, հուլիսին, ձմռանը և ամռանը նրանք համարյա թե չեն լինում, վնչ հողում, վնչ ողում և վնչ ել պտուղների վրա: Բանից դուքս ե գալիս, վոր դրոժային սնկիկները ձմեռում են միջաների աղիքներում (որինակ՝ մեղ ըոլորիս հայտնի այն մժեղների աղիքներում, վորոնք հաճախ ամպի նման պտղված են թթվագ-

դինով լի տակառների շուրջը): Այնուեղ նրանք մնում և բաղմանում են: Ամառն այդ մժեղները և այլ միջատները գուրս են թոշում իրենց ձմռան կացարաններից և իրենց արտաթորության հետ ցանում դրոֆային սնկիկները: Զվերից գուրս յեկող նույն մժեղի թըթուռները սնվում են զրոժներով և նույնպիս տարածում նրանց: Դրոժներն արագորեն բազմանում են և քամու, միջատների, մանր միջատների (որինակ՝ խխունջների) միջոցով և տարածվում են պտուղների մրա:

Այսպիսով նոր մզված խաղողի հյութի մեջ միշտ գտնվում էն գրությին սնկիկները. Այստեղ նրանք գտնում են իրենց սընվելու ամենանպաստավոր միջավայրը, զրա համար ել արագ բազմանում են հյութի մեջ և նրան խմորման յենթարկում, դարձնելով գինի:

Այժմ մեզ հայտնի յե, վոր խաղողի հյութը պահպանելու  
համար հարկավոր ե վորևէ ձևով վոչնչացնել նրա մեջ յեղած  
դրսային սնկերը և դրանով թույլ չտալ, վոր հյութը խմարվի:  
Սակայն դրսային սնկերը կարելի յե վոչնչացնել միայն այն-  
պիսի միջոցով, վոր հյութը չփոփոխվի և այն որդանիզմի համար  
ֆուռակար չդարձնի:

ԻՆՉՊԵՍ Ե ՊԱՀՊԱՆՎՈՒՄ ՀՅՈՒԹԸ ԽՄՈՐՈՒՄԻՑ

Դրոժային սնկիկների վոչնչացման ամենահասարակ միջոցն  
Կ հյութին այնպիսի նյութ ավելացնել, փոր դրոժային սնկիկ-  
ներին մեսցնի, իսկ մեզ համար անվտանգ լինի. Սակայն այդ-  
պիսի նյութեր չկան, բայց կա մի հանդամանք. մեզ համար  
վտանգավոր նյութերի այնքան չնչին քանակությունն և աղղում  
դրոժային սնկիկների վրա, փոր համարյա թե չի աղղում մեր որդա-  
նիզմի վրա: Այսպիս Հ. Ա. Միացյալ Նահանգներում հյութը խը-  
մորումից զերծ պահենու համար գործ են ածում բենզոլաթթվի  
նատրիում՝ 1 լիտրին հաշված 8 միլիգրամ (այսինքն գրամի 8  
հազարերրորդականը): Խմելով մի լիտր ալոպիսի հյութ, մենք  
մեր որդանիզմի մեջ ենք մտցնում միայն 6 միլիգրամ: Դա իր  
քաշով հավասար ե միայն մի քանի հատիկ սեղանի աղի: Բայց  
յեթե շարունակ հյութ խմնենք, հատկապես յերեխաները, ապա  
այդ քանակությունն արդեն անկարեռ չի լինի մեզ համար: Յեթև  
ըեթև բենզոլաթթվի նատրիումով պատրաստված հյութից գոր-  
ծածենք ամբողջ տարին, որը 1 շլշ, մենք մեր որդանիզմի մեջ  
կմտցնենք մոտ 3 գրամ բենզոլաթթվի նատրիումի աղ (մի ակ-

գամ ընդունելու համար բժիշկները հիվանդին տալիս են 0,1

զբամ բնագոլաթթվիդ սատրիւնը աւ՝  
վերջին ժամանակներս փորձում են գործածել ջրածնի  
գերոքսիդը, վորից հյութին են ափելացնում չնչին քանակու-  
թյամբ և ինքն ել վերջ ի վերջո ջրի յե վերածվում։ Սակայն  
ջրածնի գերոքսիդը մասամբ փոփոխում ե հյութի զանազան  
նյութերը՝ տալով նրան անդուբեկան մետաղի համ և փոխելով  
հյութի դույնը։

Այս նյութերը, վորոնց ազգեցության շնորհիվ զանազան  
մթերքներ յերկար ժամանակ պահպանվում են (որինակ՝ սալի-  
ցիւան թթվուտը, վոր հաճախ գործադրում են պամիդորի պյուրե-  
պատրաստելիս) կոչվում են անտախեպտիկներ։ Այդ անտախեպտիկ-  
ներից ոգտվելը հարմար կլիներ, յեթե նըանք իրենց դերը կա-  
տարելուց հետո իրենք ել վոչնչանային, այսինքն՝ յեթե դրոժա-  
յին սնկերը կոտորելուց հետո իրենք ել չեղոքանային։ Մասմբ  
այդպես և ջրածնի գերոքսիդը, սակայն ինչպես վերը նշեցինք,  
նա մի քիչ փոխում ե հյութի հատկություններն ու համը։ Ամեն-  
քից լավ նյութը, վոր վոչնչացնում ե դրոժային սնկերը և հե-  
տադաշնում ինքն ել վոչնչանում ծծմբային թթվուտն ե։ Ծծմբային  
տագայում ինքն ել վոչնչանում ծծմբային թթվուտն ե։ Ծծմբային  
տագայում հայտնի յե գինեգործներին, քանի վոր այն գոյա-  
թթվուտը լավ հայտնի յե գինեգործներին, քանի վոր այն գոյա-  
նում ե տակառներին ծծմբապատրույքներով (հալած ծծումբով պա-  
տած թուղթ) ծծմբի ծուխ տալիս։ Ծծումբն այրելիս առաջ և  
գալիս խեղղող ուտիչ ծծմբային դադ, վորի լուծույթը ջրում  
կոչվում ե ծծմբային թթվուտ։

Այժմ հայտնի յի ծծմբային դավը խտացնելու ու հեղուկ դարձնելու ձեզ (մեծ ճնշման ներքո): Այսպես հեղուկ դարձած ծծմբային դավը կոչվում է հեղուկ ծծմբային թթվուտ և ծախվուտ և մետաղյա փակ գլաններում (բամբերում):

Ծծմբային թթվուտը դրստային սունկերը վոչչացնելուց  
հետո հեշտ և հեռացնել խաղողի հյութից. Սակայն այստեղ մի  
նոր դժվարություն և առաջանում: Ծծմբային թթվուտը հյութից  
հեռացնելիս կարող են հյութի մեջ ընկնել նոր գրոտային սնկեր  
և բորսոսանկեր, վորոնք ծծմբային թթվուտի բացակայության  
ժամանակ հեշտությամբ կարող են բազմանալ և առաջացնել  
հյութի խմբում կամ բորբոսում: Հետևաբար, պահածոն  
հյութեր պատրաստելու համար բավական չե միայնմիկը որպահիզմերին վոչչացնելը, պետք և նաև այնպես անել-  
վոր անպահպահած (այսինքն՝ կենդանի միկրոսկոպիկ որդանիզմ-

Ներից զուրկ) հյութի մեջ նորից միկրոսրգանիզմներ չընկնեն-  
թե ինչպես և այդ կատարվում՝ կնկարագրենք հետո:

Այսպիսով, ծծմբային թթվուտով կարելի յե ոգտվել միայն հյութն անսպողացնելու համար: Իսկ թթվուտը հեռացնելուց հետո պետք է ձեռք տոնել ուրիշ միջոցներ, վորպեսզի հյութի մեջ նոր դրոժային սնկեր չընկնեն և հյութը չխմորվի:

Ծծմբային թթվուտի այն հատկությունը, վոր նա կարող ե սպանել խաղողաճյութում գանված միկրոսրգանիզմներին և հեշտությամբ դուրս գալ հյութից, շատ պարագնում ե պահածո հյութեր պատրաստելու դորձը: Յեթե գեռես հյութ պատրաստելու անտեսություն չի կազմակերպված, ծծմբային թթվուտը համարյա անփոխարինելի յե այդ զործում:

Վոչ ռացիոնալ տրտագրության մեջ հյութ պատրաստելու համար հաճախ խաղողը բերվում ե արորված և արդեն խմորումն սկսված, այն շինքում, ուր պատրաստվում ե հյութը, շերմաստիճանը բարձր ե լինում, ստացվում ե աղիք մեծ քանակությամբ բաղող, քան թե կարող են 1 որում վերամշակել և այլն:

Յերբ խաղողի մեջ դրոժներն արդեն խիստ բաղմացնել են և սկսվել ե խմորումը, նրանց համար սպասատակոր ջերմության դեպքում շատ շուշ քաղցուն սկսում ե յեռակ գոյացնելով գինի չենց այստեղ ե, վոր փրկում ե ծծմբային թթվուտը: Խաղողի հյութի մեջ ծծմբային թթվուտ մոցնելուն պես խմորման բոլոր նշաններն իսկույն դադարում են, իսկ սնկերը վոչնչանում: Թե վորքան ծծմբային թթու պետք ե գործադրել այդ սպատակի համար, այդ կախված ե խաղողի դրությունից, նրա կազմությունից, շերմաստիճանի բարձրությունից, հետագա գործողությունների ժամանակից և այլն:

Այսպես մինչև մյուս գործողությունները կատարելը ծծմբային թթվուտով հյութը պահպանելը կոչվում ե՝ մյուտիրացում (մյուտիրուն), վորի ընթացքում միաժամանակ հյութը պարզում, մաքրվում ե, իսկ հատակին նստում ե դիրտը: Հայտատանում դեռևս այսպիս են պատրաստում պահածո խաղողի հյութերը (բացի 1928 թվից, յերբ Հայտատանում հյութերի մշակմամբ զբաղվող Հայրուժպետառը գործադրեց մի այլ միջոց):

Ճշմարդ խաղողի հյութը լցվում ե կոնաձե, խոշոր չաների մեջ, վորտեղ և մացվում ե հարկ յեղած քանակությամբ ծծմբային թթվուտը (հեղուկ վիճակում, կամ թե՛ հատուկ վորբիչ պատառով այրում ե կատարվում): Սկսված խմորումն անմի-

ջապես կանգ ե առնում: Հանդիսատ վիճակում թողնված հյութից աստիճանաբար առանձնանում են կողմնակի խառնուրդները՝ հողը, ավազը, պատյանի կտորանքը և խաղողի միջուկը: Միաժամանակ նստվածքի մեջ են անցնում նաև գրոժային սնկիկները, նրանց զգալի մասը վոչնչանում ե, իսկ վորքան քիչ են նրանք, այնքան հեշտ ե հյութն ապահովել խմորումից: Մաքրված ու պարզված հյութը նստելուց հետո լցվում ե տակառների մեջ և թողնվում այդպես մինչև վերամշակումը: Ավելի լավ ե հյութը պահել ցածր ջերմություն ունեցող մառանում: Փամանակ տու ժամանակ քիմիական յեղանակով ստուգվում ե, թե յուրաքանչյուր տակառում փորքան ծծմբային թթվուտ կա և անհրաժեշտության դեպքում ավելացվում ե թթվուտի քանակը:

Հյութից, նրա հետագա մշակման ընթացքում, պետք է հեռացնել ծծմբային թթվուտը, վորովինետև այն վասակար և որդանիզմի համար:

Հայբուժական տակառության վերը հիշեցինք, Հայտատանում ամենից տանջ սկսեց խաղողի հյութ պատրաստելու գործը (1927 թ.): Յերեանի Սյամե-Դինենեգործական կայանի նախագծով, պատրաստել ե հյութից ծծմբային թթվուտը հեռացնելու մի ապարատ\*):

Այդ ապարատը բավական կատարելագործել ե «Արարատ» արեստը, վորը 1930 թվից իր ձեռքն ե առել խաղողի հյութ արտադրելու գործը: Այդ ապարատը կարելի յե անվանել դիսուլֆիտատը (այսինքն ծծմբային թթվուտը հեռացնող ապարատ): Նրա գործունելության եյությունը հետեւյալն ե. ծծմբային թթվուտը, վոր այս կամ այն ձևով մացվում ե խաղողի հյութի մեջ, մասմբ ցնում ե, սասամբ ոքսիգանում, մասմբ մնում ե ազատ վիճակում, սակայն, մեծ մասմբ միանում ե հյութի մեջ յեղած նյութերի հետ (շաքարներ) և կազմում ե բավականին կայուն միացություններ: Վորպեսզի կարելի լինի վորը ծծմբային թթվուն հյութից ամրոցվին հեռացնել, պետք ե ամսնից առաջ քայլայի այդ միացությունները, իսկ քայլայի լուց հետո անմիջապես պիտի հեռացնել ապատված ծծմբային թթվուտը, վորպես-

\*) Կարեսը այն չե, թե վորքան ծծմբային թթվուտ ե գործածվում հյութի արտադրության մեջ, այլ այն, թե վորքան և մուռմ նրանից պատրաստի վաճառքի համար է հեղուկ միջուկը որենքի գինու մեջ թույլարկում և լիտրին 20% միլիլիտրամ: Հյութի մասնիկն զեր և որենք չկտ, բայց մշակվում ե:

զի նո նորից նույն միացությունները չկազմիւ Այդ արվում և հետեւյալ ձևով. ծծմբային թթվուտով հյութը տաքացնում են բակի մեջ 70—75 աստիճանի, վորի ընթացքում ծծմբային միացությունները վեր են անվում իրենց բաշաղրիչ մասերին (շաքար և աղաւա ծծմբային թթվուտ), Միաժամանակ կոմպրեսորից ճնշման միջոցով արտափչում ե ողը, վորը հյութից դուրս ե մոռւմ ծծմբային գազը: Տաքացրած հյութն անձրեւ պես թափվում ե ցնձուղին նման ծակոտկեն ձագարի միջով:

Այս ձևով ցնձրելու ժամանակ աղաւա ծծմբային գազը ևս ցնդում եւ Ապա հյութը նորից պոմպի միջոցով անցնում ե բակի մեջ, մինչև վոր քիմիական անալիզը ցույց կտա, վոր հյութի մեջ մնացել ե ծծմբային թթվուտի չնչին քանակություն, վորը հետագա գործողությունների ընթացքում նույնպես վոչնչանում եւ:

Գոյություն ունեն ավելի բարդ դիսուլֆիտատորներ, սակայն մեր նշանը հարմար ե նրանով, վոր լիովին կատարում ե հյութից ծծմբային թթվուտը հեռացնելու խնդիրը և հեշտ ու հժան կարող ե պատրաստվել: Այս ապարատի ոգնությամբ Հայաստանում արդեն պատրաստված ե մոտ մի միլիլոն շիշ հյութ:

Ծծմբային թթվուտը հյութից հեռացնելուց հետո ել նա հեշտությամբ կարող ե խմորման յենթարկվել: Դրա համար ել նա ողետք ե հետագա վերամշակման յենթարկվի: Վերամշակման ընթացքում ամենակարևոր աշխատանքը հյութը նորից դիմացկուն դարձնելն ե, բայց արդեն առանց անտիսեպտիկների գործադրության, և նրա պաշտպանելը՝ նոր գրոժային սունկերից: Այս գործողությունն ամենից եյականն ե. դրա համար հյութը յենթարկում են պաստերիզացիայի:

Այս գործողությունը հյութի պաստերիզացիան ե և այսպես կոչվել ե ֆրանսիական մեծ դիտնական Պաստերի անունով, վորն առաջին անգամ առաջարկեց այդ ձեզ և վորին գլխավորապես դիտությունը պարտական ե մեր հիմնական դիտելիքներով՝ գրոժային սնկերի և խմորման պրոցեսների մասին: Պաստերիզացիայի եյությունը հետեւյալն ե. դրոժային սնկերը, ինչպես և բոլոր կենդանի եյակները, կարող են ապրել ու զարգանալ մի վորոշ ջերմաստիճանի պայմաններում (ինչպես նշեցինք վերը): Բարձր ջերմաստիճանի տակ նրանք մեռնում են, բայց բարձր ջերմությունը կարող ե վատ անդրադառնալ հենց իրեն՝ խաղողի:

Հյութի հատկությունների վրա, ինչպես և պաստերիզացիայի յենթարկվող ուրիշ մթերքների վրա, որինակ՝ կաթը:


Դրա համար պետք ե ընտրել այնպիսի ջերմաստիճաններ, վորոնք քիչ աղղեն հյութի վրա, Այդպիսի ջերմ սստիճաններ են 62—70°, Վորքան յերկար ե տևում բարձր ջերմաստիճանի աղղեցությունը, այնքան ավելի յն փոխվում հյութը, հետեւյարար պետք ե հյութի տաքացման տեղությունը ևս կարճացներ: Այդ տեղողությունն այնքան պետք ե լինի, վոր սպանվեն գրոժային սնկիկները, բայց համարյա չազդի իր՝ հյութի հատկությունների վրա: Մի շարք հետազոտություններից հետո այդ ժամանակը վորոշված ե 15—30 րոպե: Վերջապես պաստերիզացիայի մի պայման ել կա, այդ այն ե, վոր պաստերիզացիայի յենթարկված հյութն ապահովված չի գրոժային սնկերով նորից վարակվելու հսարավորությունից և պահանջում ե պաշտպանություն: Այդ պաշտպանությունը պաստերիզացիայի ընթացքում պայման ե, վոր նա գտնվում ե փակ ամաններում, լինեն դրանք շնոր, թե տակառներ, ուր չի կարող թափանցել ողը, վորը բերում ե գրոժային սնկիկներ: Ցեղ այսպես, յեթե կարճ ասենք, պաստերիզացիան փակ ամանների մեջ հյութը վորոշ ժամանակիցոցում տաքացնելն ե 62—70°-ի:

Պարզ ե, վոր պաստերիզացիայի յենթարկված հյութերը կարող են պահպանվել յերկար ժամանակ, քանի վոր դրոժային սնկիկները նրանց մեջ վոչնչացված են, իսկ նորերն ընկնելու հսարավորություն չունեն:

Պաստերիզացիան կարելի յե կատարել զանազան ամաններում—շնորում, տակառներում, և այլն: Վերջապես կան մի շարք զանազան կառուցվածքի գործիքներ, վորոնք կոչվում են պատերիզատորներ: Մեզ մոտ տարածված ե Զեյտց Փիրմայի պաստերիզատորը, վորը կոչվում ե վելոկտ, այսինքն Շարագ: Նրա կառուցվածքը յերեսում նկարից (տես նկար № 3):

Վելոկս պաստերիզատորը բաղկացած ե 2 մետաղյա տուփերից: Տուփերից մեկը (նկարում աշակողմանը) բաժանված ե 2 մասի՝ տաքացնող և սառեցնող մասեր: Տուփերի մեջ կան մի շարք կրկնակի միջնապատեր, վորոնք առաջացնում են 2 կարգի կամերներ, մեկը՝ միջնապատային, վորոնց կարելի յե անվանել միջնորոշույթին տարածություններ, մյուսը՝ հենց միջնապատերի արանքներում—միջնորոշույթին: Տուփի բաց մասը ծածկված ե

մետաղյա մաղով. գտտարկ մասում սառնարանն ունի 2 անցք, մեկը՝ սառը ջուր ընդունելու, մյուսը՝ գործածված ջուրը բաց թողնելու համար։ Մյուս տուփը (ձախ կողմինը) հանդիսանում է ջերմարանը և ջերմացումը կարգավորող ապարատը։ Ջերմարանը ևս ունի միջնարտային և շիրտավոր կամերաներ, իսկ ցածում ունի մի տարածություն, կաթսայից տաք ջրով լցվելու համար։



Նկ. 3. Պաստերիզատոր վելոքս

Այս ապարատում հյութի (կամ զինու) ջերմացումը կատարվում է ցածք ձնշման (0,5 մթնոլորտ) շոգեկաթսայի գոլորշումիջոցով։ Պաստերիզացիայի յենթարկվելիք հեղուկը պաստերիզատորների մեջ պատյառ է կատարում հետեյալ կարգով։ Հյութը զալիս և առանձին բակից, վորը կարգավորող կրանից 10—15 սմ. բարձր է դրված, և անցնում է աջ տուփի ցածի մասի միջնարտային տարածու-

թյունների մեջ։ Այստեղից անցնում է վերին մասը, ապա խողովակով դնում ջերմացնող կամերայի (ձախ արկղի) միջնարտային տարածությունները։ Այդ կամերայից հատուկ անցքով անցնում է ջերմացումը կարգավորող ապարատը և վերին խողովակով, աջ արկղի մաղի միջոցով անցնում է սառնարանը, իսկ այնտեղից խողովակի միջոցով անցնում է գոլորշիներով հագեցած տակառի մեջ։ Պաստերիզացիայի յենթարկված հյութը սառնանում է մի նոր հյութով, վորը ջերմության խնայողություն և ստեղծում ջերմարանում հյութը գտնվում է միջնարտային տարածությունների մեջ։ Մի որում (6 ժամ) կարելի յենթարկվացիայի յենթարկել 350—400 դույլ հյութ։

Տակառները դրսից ոճվում են մոմախառն յուղով (վուշի), վորպեսզի գամկածքի անցքերը բռնվեն։ Տակառը լցնելիս ողը նրա մեջ և մանում ներքին անցքից ողի ֆիլտրի միջոցով։ Այդ ֆիլտրը բաղկացած է մետալյա ցանցերից, վորսնց արանքներում կան բամբակի շերտեր։ Նա նույնական վերամշակվում է գոլորշիով։ Տակառը պաստերիզացիայի յենթարկված հյութով լցնելիս պահանջվում է մեծ ուշադրություն, մանավանդ պահանջվում է պահպանել խստիվ մաքրություն, վորն անհրաժեշտ և ընդհանրապես հյութերի արտադրության ամբողջ ընթացքում։ Տակառներից հյութը, ըստ կարիքի, լցվում է շաքերի մեջ։ Շաքերանն ամրացվում է բացաններով, վորոնք ունենում են ապահովիչներ, վորպեսզի տաքացնելիս խցանները դուրս չթուշեն։ Խցանները պաստերիզացիայի յենթարկվում առանձին կամերայում։

Համախի հյութը պաստերիզացիայի յենթարկվում ուղղակի շնկերում։

Հյութը անցնում պաստերիզացիայի յենթարկող ապարատը մետաղյա քառանկյունի մի արկղ և, վոր գրված և պլիտի վրա Արկղի հատակին զրվում է փայտե ցանցավոր միջադիր (որոշակած)։ Այդ միջադիրի վրա զրվում են խցանված ու ապահովիչ ունեցող հյութով լի շաքեր։ Արկղի մեջ ջուր և լցվում, վորը տաքացվում է գոլորշիով (կամ տաք ջրով)։ Պաստերիզացիայի ժամանակը հաշվում է այն մոմենտից, յերբ ստացվել է ցանկալի ջերմությունը։ Դրա համար կամերան և իջեցվում հեղուկով (հյութով) լի ստուգիչ շիշը վորի մեջ դրված է ջերմաչափը։ Եթե ջերմաչափը ցույց է տալիս անհրաժեշտ ջերմաստիճանը (ը. 65°), սկսում են հաշվել ժամանակը, վորի ընթացքում ցան-

կանում են կատարել պաստերիզացիան (որինակ՝ 20—30 րոպե): Յեթև հյութը նախորոք չի տաքացվել (պաստերիզատորում կամ դիմուլֆիտատորում), նա պաստերիզացիայից հետո շշերի մեջ պղտորվում է: Այդ դեպքում անհրաժեշտ և լինում քամել (Փիլտրացիայի յենթարկել), և վորև Փիլտրի միջոցով նորից շշերում պաստերիզացիայի յենթարկելը Այդ դեպքում, ի գուր տեղը խցանները փշացնելուց խուսափելու համար, առաջն պաստերիզացիան կարելի յեն կատարել բամբակով խցանած շշերում, իսկ շշերը դնել կամերայում կանգնած դրությամբ:

Հյութի պաստերիզացիան՝ չափավոր ջերմությամբ և կարելույն չափ կարճ ժամանակամիջոցում, շատ քիչ և փոխում հյութի հատկությունները, բայց և այնպես առանց աղղեցության չի մնում: Մասսամբ վոչնչանում են, որինակի համար, այն արժեքավոր նյութերը, վորոնք վիտամին են կոչվում, մասսամբ փոխվում են համը և հոտը: Ի հարկե, ավելի լավ կլիներ դրույթ բերել բոլորսվին առանց ջերմացնելու:

## ՀՅՈՒԹԵՐԻ ՊՍԱՇՈ ՊԱՏՐԱԾԵԼՈՒ ՍԱՐԸ ՄԻՋԱՅՐ

Ներկայումս այդպիսի յեղանակ առաջադրված են և արդին գործադրվում են խոշոր արդյունաբերության մեջ: Այդ միջոցը հաճախ անվանում են «սառը միջոց»: Նա հիմնած և Փիլտրացիայի վրա: Ֆիլտրացիա ասելով ընդհանուրապես հասկանում ենք հեղուկների մաքրելը նրանց մեջ լողացող այն մասնիկներից, վորոնք առաջացնում են պղտորություն: Մեր աչքին թափանցիկ յերեացող հեղուկն իրոք կարող են պղտոր լինել՝ իր մեջ պարունակելով պղտորության մասնիկներ: Այսպես՝ պղտոր ջուրը քամում են ավազի միջոցով, լարուատորիաներում հաճախ ոգտագործում են մի տեսակ բարակ թուղթ, վոր կոչվում է Փիլտրի թուղթ: Ֆիլտրացիան լայն գործադրություն և գտնում զանազան արտադրությունների մեջ, որինակ շաքարի գործարաններում, գարեջրի և գինու գործարաններում, և այլն:

Ֆիլտրացիայի հյությունն այն է, վոր Փիլտրող մասսան շատ մանր անցքեր ունեցող մի շերտ և կազմում, վորի միջով չեն անցնում պղտորություն առաջացնող մասնիկները:

Դինեգործության ժամանակ շատ հաճախ պղտոր գինիներ Փիլտրացիայի յեն յենթարկում աղբեստով:

Աղբեստն սպիտակ գույնի մի հանք և (Խ. Միության մեջ

մեծ քանակությամբ կա որինակ՝ Աւրալում), վոր չի հալվում թթու հեղուկների մեջ, վորպիսին և գինին կամ խաղողի հյութը:

Գինու կամ հյութի հետ վորոշ հարաբերությամբ խառնված աղբեստը Փիլտրի մաղերի (կամ ցանցերի) վրա առաջացնում և միւրուն շերտ, վորը Փիլտրացիայի ժամանակ ավելի յեն խունում նրա վրա նատող լորձուն տականքներից:

Յերկարատես Փիլտրացիայի ժամանակ Փիլտրատոր շերտն այնքան և խունում, վոր այլև բոլորովին բաց չի թողնում հեղուկը: Այն ժամանակ կարիք և լինում Փիլտրը վերանորոգել այսինքն՝ դեռ ձգել անպետքացած աղբեստը, Փիլտրը լվանալ և վերցնել նոր աղբեստ:

Դրուժային անկերը, ինչպես ասացինք, խիստ մանր են նրանց մեծությունը միլիմետրի մեջ հազարերորդի չափ ե:

Յեթև ունենանք Փիլտրող այնպիսի նյութ, վորի անցքերը գործը են գրուժային անկերի մեծությունից, այդ դեպքում, պարզ ե, հյութը կարելի յեն աղատել դրուժային անկերից, հետեւապես և աղանդովել այն խմորումից:

Այն Փիլտրները, վորոնք գործադրվում են գինեգործության և այլ արտադրությունների մեջ, ունեն այնպիսի մեծության անցքեր, վորոնք միջով աղատ անցնում են գրուժային անկերը:

Խաղողի հյութի այդ ձևի Փիլտրացիան չի կարող ապահովել նրան խմորումից:

Միայն վերջին ժամանակներս ե, վոր գերմանական «Զեյց» Փիլտրան, վոր գինեգործական ձեռնարկություններին սեփական կոնստրուկցիայի աղբեստի Փիլտրներ և մատակարարում, արտադրեց այնպիսի Փիլտրներ, վորոնք չեն անցկացնում գրուժային սունկերը: Այդ Փիլտրներն ստոցել են «Ե. Կ.» կրծառ անունը, վոր գերմանական բառերի առաջին տառերն են և նշանակում են անպաղացնող Փիլտրներ: Այդ Փիլտրները լինվում են զանազան մեծությամբ և զանազան արտադրողականությամբ: Սակայն, դինեգիսի մեծության ել լինեն, խնդիրը, Փիլտրող մասսան նյութն ե, վոր գործադրվում ե նրանց մեջ:

Այդ մասսան Փիլտրան գաղտնի յեն պահում, բայց այժմ լինինդրագում սովորել են պատրաստել նման Փիլտրներ:

Այդ Փիլտրի մասսան ունի այնպիսի փոքրիկ անցքեր, վոր գրուժային անկերը նրանց միջից չեն անցնում կամ մնում են քամիչներում: Ֆիլտրող շերտը (նկ. № 4) մի Փիլտրուն մասսայի շատ խառ

և վորոբապտույտ մանրագույն խողովակներով և անցքերով: Պղտությունն առաջացնող այն մասնիկները, վորոնք իրենց մեծությամբ խոշոր են անցքերից, մնում են ֆիլտրի մակերևույթի վրա, ծակելով անցքերը և կիտվելով անցքերի մուտքի մոտ: Այդ մասնիկներն սաեղջում են յերկրորդ ֆիլտրող շերտ, վորն ավելի յերակում ծակուիչները և պղտորությունն առաջացնող մանր մասնիկներին, ինչպես և դրոժային սնկերին արգելում և անցնել դեպի քամիչները:

Իսկ սունկերի այն մասը, վոր ընկնում քամիչների մեջ, նստում և նրա գոգավորությունների մեջ, կամ կպչում և քամիչների պատերին:


Հյութերի ֆիլտրացիան կատարվում է վորոշ ճնշման, կամ ուժի ազդեցության տակ, վորը չպետք է խիստ բարձրացնել: Միտու ճնշման տակ տականքը մաղվում է, կազմելով յերկրորդ ֆիլտրող շերտ, իսկ մասնիկների մի մասը մզվում և քամիչների ներսում: Այս բոլորը կարող են կանգնեցնել ֆիլտրացիումը և հարկագրել, վոր ֆիլտրը ժամանակից առաջ վերանորոգվի: Ցերե ճնշման ուժը կայուն չի, այլ փոփոխվում է, ֆիլտրացիայի յենթարկող շերտի կազմությունը խախտվում է: Վորպեսդի ֆիլտրը կանոնավոր աշխատի, պահանջվում է համաշափ ճնշում, վոր աստիճանաբար պիտի ուժեղացվի վերջանալուն մոտ, առանց հանկարծակի հպումների:

«ԷԿ» անպաղացնող ֆիլտրով ֆիլտրացիայի յենթարկելուց առաջ նախ պիտի և հյութը ֆիլտրացիայի յենթարկել սովորական ազբեստի ֆիլտրով (նկար № 4), հակառակ դեպքում, պղտորությունն առաջացնող այն խոշոր մասնիկները, վորոնք զատվում են սովորական ֆիլտրացիայի ժամանակ, շուտով անցքերը կրակեն և ֆիլտրացիան կանգ կառնի:

Անպաղացնող ֆիլտրները (ԷԿ) ունեն շրջանակածե կազմություն, լինում են տարբեր արտադրողականությամբ (300 լիտրից մինչև 200 լիտր մի ժամում): Ցածր արտադրողականությամբ ֆիլտրները տեղափորվում են մի տախտակի վրա, վորն ամրացվում և պատին, միջինը՝ յեռանկյունի յերկաթե պատվանդանի վրա, բարձր արտադրություն ունեցողները՝ քառանկյունի պատվանդանի վրա (նկար 5, 6 և 7):


Ֆիլտրող շրջանակները տեղափորվում են ուղղահայաց դըրքած կափարիչների արանքում: Շրջանակներից մի քանիսը հանվում են, իսկ մյուսները միայն տեղափոխվում են այն ձողերի

գերկարությամբ, վորոնց վրա նստած են: Հետեւի կափարիչն անշարժ կպած է ֆիլտրի պատվանդանին, իսկ առաջինը շարժական է և հանովի: Հանվող և չհանվող շրջանակները հաջորդում են երար: Հանվող շրջանակները վերնում ունեն դուրս ընկած մասեր կլոր անցքերով, վորոնք ի մի հավաքվելով ֆիլտրում կազմում են յուրաքանչյուր շրջանակի հետ հաղորդակցվող մի խողովակի: Ներքին խողովակը կազմում են ամրացված, չհանվող շրջանակները:




Նկ. 4. Զերացի սովորական ազբեստային ֆիլտրը.


Այդ խողովակը հաղորդակցվում է ամեն մի չհանվող շրջանակի հետ: Հանվող և չհանվող շրջանակների արանքում գտնվում են ֆիլտրող թիթեղները, վորոնք բաժանելով մեկ շրջանակը մյուսից՝ կազմում են վակ կամերներ: Հանվող շրջանակներով կամերաները հաղորդակցվում են վերին խողովակի միջոցով, չհանվողները՝ ներքին:



Նկ. 5. Զեյտցի անպաղաբեր դարձնող ֆիլտրի (Յ-Կ) տեսակը



Նկ. 6. Զեյտցի անպաղաբեր դարձնող ֆիլտրի (Յ-Կ) տեսակը



Նկ. 7. Զեյտցի անպաղաբեր դարձնող ֆիլտրի (Յ-Կ) տեսակը

Անպաղացած հյութն առաջին (1) խողովակով մտնում է ներքեմի խողովակը և շրջանակների ցածի անցքերի միջացով բաշխվում ե ըստ կամերաների (11): Այնուհետև հյութը ճնշման աղղեցության տակ անցնում ե ֆիլտրող շերտերի միջով և մտնում հարևան կամերաները (C):


Այստեղ արդեն հյութն անպաղացած ե: Այդ կամերաներից հյութը հանվող շրջանակների անցքերով մտնում և վերին խողովակը, իսկ այնտեղից՝ խողովակի կամ շլանդի միջով լցվում և տակառը, կամ մի այլ ամառ:

Այժմ շինում են բոլորը հանվող շրջանակներ:

(№ 8 նկարում պատկերացրած ե հյութերի ճանապարհը ֆիլտրում. փակած տարածությունը վոչ անպաղացած հյութն ե, սպիտակը՝ արդեն անպաղացած հյութը):

Ֆիլտրի սարքավորումը կատարվում ե շատ հասարակ. հանում են առաջին պլուտակը, ամրացնող պլուտակները, հետ են գցում ձողերը և առջեր կափարիչը շարժում առաջ: Ազատված առաջին հանվող շրջանակը դուրս ե բերվում ունկերից և նրամեջ շկոդմերից դրվում են ֆիլտրող թիթեղներ, ապա շրջանակը նորից գրվում ե ֆիլտրի մեջ և սեղմվում առաջին շրջանակին: Այսպես են վարվում և մյուս շրջանակների հետ: Ցեր-

արդեն բոլոր թիթեղները գարսկած են, շրջանակներն առաջին կափարիչի հետ ամուր սեղմում են հիտին կափարիչին և անմիջապես ամրացնում պտուտակներով։ Դործածելուց առաջ ֆիլտրը լվանում են նախ տաք, ապա սառը ջրով, իսկ յերբ ֆիլտրը պատրաստված ե, վորոշ ժամանակ ջուր են բաց թողնում, վորաբեսզի հյութը ֆիլտրից կողմանակի համ չատանաւ միլտրը մաքրելու համար ավելի լավ և դործածել գոլորշի, վորը բաց և թողնվում 10—15 րոպե, մինչ կափարիչն այնքան տաքանա, վոր կարելի չինի ձևոք տար.




Նկ. 8. Հյութի (օօկ) ընթացքը (ԷԿ) Փիլտրից

Հեշտ և նաև Փիլտրը քանդելը. Նախ հանվում են պտուտակները, առաջ և քաշվում առաջին կափարիչը, վերին ունկից բռնած զուրս են քաշվում շրջանակները, հանվում են թիթեղները։ Զրհանոցը (նասոս) և շանզը լվանում են սողայի 20/0-ային լուծույթով և ապա ջրով։ Զաշխատող Փիլտրի զուրս յեկող թեր ծածկում են սովորական կամ սետինե խցանով, վորը պիտի մի քանի ժամ թթվագած լինի 20/0-ային ծծմբային թթվուտի լուծույթով։ Լավ և նաև, բացի այդ, թեր ծայրը փաթաթել նույն լուծույթում թթվագած բամբակով։

Հյութի սմանները՝ (տակառները, շները) պետք ե անշղայշան ծայրաստիճանի մաքուր լինեն.

Ամանների լվացումը փոխանակ ծծմբաթթվուտով և սողայով կատարելու, այժմ կատարում են ծծմբային թթվուտով, վորը գործադրվում է հեղուկ վիճակում։ Այն բոմբից, վորի մեջ գտնվում ե ծծմբային թթվուտը, լցնում են հատուկ չափող անոթի մեջ, վորի միջոցով կարելի յե վերցնել ծծմբային թթվուտի ցանկացած քանակը։ Այսպիսի անոթը կոչվում է սուլֆիտոմետր և լինում ե զանազան կառուցվածքների (նկար № 9):

Շլանգը դարսվածքին միացնելուց առաջ նրա ծայրը վառվում է, վորաբեսզի տակառը ջրով լցնելիս նրա մեջ դրոժային անկեր (մանրադիտակային որդանիդմեր) չընկնեն։ Զուրը գուրս



Նկ. 9. Սուլֆիտոմետր (սուլֆիտոչափ)։

Եթափում ցածի կրանով, վորի ընթացքում նախազդուշական միջոցներ են ձեռք առնվում, վորպեսզի վարակիչ մարմիններ չընկնեն նրա մեջ։ Դրա համար կրանը շիկացվում է և շարունակ պահպում ե անպաղացած ջրով ծածկված։ Յերբ ամբողջ ջուրը դուրս է հոսում, կրանն զգուշությամբ պտուտակվում է և անցքն արագ փակվում ծծմբային թթվի 20/0-ային լուծույթի մեջ թթվ։ Ջված բամբակով, ապա փակում են զպունտով, վորը նույնպես պիտի ախտահանված լինի ծծմբային թթվուտով։ Զուրը հեռանալիս տակառի մեջ ող և մտնում, վորն իր մեջ կարող է ունենալ

գրոժային սնկեր և այլ սաղմեր, սակայն տակառը դրանցից պաշտպանված և նրանով, զոր ողբ տակառի մեջ և մտնում վոչ թե ուղղակի, այլ ողային ֆիլտրի միջոցով:


Հյութի տակառներն ու ցիստերնները պետք են վոչ միայն անպտղացած լինեն, այլև պետք են պաշտպանված լինեն նոր գրոժային սնկերի մուտքից, դրա համար նրանք ոժտված են ողային ֆիլտրներով: Անպտղացումը կատարվում և ծձմբային թթվուտով (40 գույլին 50—74 լր. սմ. հեղուկ

ծձմբային թթվուտ): Ծձմբաթթուն չափում և սուլֆիտումետրով և անց և կաշվում ցածի հատուկ կրանով, զորից անմիջապես հետո կրանը փակվում ե (այնպես, ինչպես ողային ֆիլտրների կրանը): Ծձմբային թթվուտը թողնվում ե տակառի կամ ցիստերնի մեջ 10—14 որ, զորից հետո տակառի մոտ  $\frac{3}{4}$ -ը լցվում և «ԷԿ» ֆիլտրով անցկացրած ջրով: Այդ ժամանակ ջուրը լուծում և ծձմբային թթվուտը և վերջինս դուրս ե գալիս նրա հետ միասին:

Անպտղացած ֆիլտրով անցած հյութով լցվում ե տակառը մինչև վերջը, զորից հետո կրանը փակվում ե և լվացվում  $2\%$  ծձմբային թթվուտի լուծույթով: Փրփուրը դուրս և թափվում փոքրիկ կրանով: Շլանցը հեռացնելուց հետո ողային ֆիլտրի անցքը ևս լվանում են ու փակում հատուկ փոքրիկ կափարիչով, ապա քանդում են ամբողջ ֆիլտրը. իսկ խողովակի ծայրը լվանում ծձմբային թթվուտով, փակում են ուստինե խողովակով և շպունտով: Այդ շպունտը (նկար № 10) իրենից ներկայացնում է կորացրած խողովակ՝ լցված գլիցերինով, սպիրտով կամ թունդ ծձմբային թթվուտով:

Խողովակի ծայրը լայնացած և ձագարի ձևով, զոր թեթևակի փակված և լինում բամբակով:

Ենթե տակառում սկսվի խմորումը, խմորման ընթացքում արտադրված ածխաթթու գաղը կանցնի ձագարի հեղուկի միջոցով և ցույց կտա խմորման սկսվելը, իսկ վերին ողը չի կարող անցնել տակառի ներսը, նա այնտեղ կանպտղանաւ:



Նկ. 10. Շպունտ  
(մեջն ակոսած տակառակ)

Յեթե խմորման նշանները ժամանակին են նկատված, գեռ հյութը կարելի յե փրկեր, նորից անցկացնելով այն «ԷԿ» ֆիլտրով: Շենքը հարմար և մաքրել և ստելլա կոչվող ապարատի մեջ, զոր նշանակում և «աստղ»:

Թեև և Ե. Կ. ֆիլտրի հետ վարկելը շատ բարդ չե, բայց մեծագույն ուշագրություն և որինակելի մաքրություն ե պահանջում, զորը պետք ե պահպանվի վողջ արտադրության մեջ: Դրա համար ել և Ե. Կ. ֆիլտրը կարող ե արդյունք տալ այնտեղ, ուր իսկատար յերաշխիք կա մաքրության և կան վորակյալ բանվորներ, իսկ ավելի ճիշտ կիմնի՝ այդ ֆիլտրից ոգտվել կոմբինացիաներ կազմելով մյուս ձեւերի հետ, որինակ՝ պատճերիղացիայի հետ, կիրառել այն, որինակ, շերը լցնելիս:

### ՀՅՈՒԹԻ ՍԱՐՑՆԵԼԻ

«Ե. Կ.» ֆիլտրի հետ զուգընթաց վերջերս առաջ ե յեկե հյութի պահպանման նոր միջոց՝ մի մեծ ամանում առանց պաստերիզացիայի և առանց ծձմբային թթվուտի գործածության: Դա հյութը սապցնելն է: Այս մեթոդը ավելի ու ավելի դուրս և մղում մյուսներին:

Շվեյցարիայում, ուր շատ զարդացած և պտուղների և խաղողի հյութի արտադրությունը, այս միջոցով և պատրաստված մշտակող հյութերի կես մասը:

Այս նոր միջոցի եյությունն այն է, զոր մամուլով մնչված խաղողի հյութը հանդիսաւ վիճակում մնում ե 1—2 ժամ և առանց ֆիլտրելու անցնում սապցնող կամերաները, ուր ջերմությունը օ՞ է. Այստեղ նա պահպան և առանց զորեւ վերամշակման, մինչև վերջնական տեղափոխումն ու սպառհեմը:

Յեթե խաղողը յեղել և լավ զրության մեջ (չտրորված, առանց խմորման նշանների), ապա այդ ջերմաստիճանի տակ հյութի խմորում չի առաջանում, իսկ զրոժային սնկերը չեն զարդանում:

Սառեցման յեղանակն ունի յերկու ձև. առաջին դեպքում սառեցվում ե այն շենքը, ուր պահպան և հյութը, յերկրորդ դեպքում՝ սառեցվում ե հյութը, զոր լցված և շաների, կամ տակառների մեջ: Վերջին միջոցն ավելի հարմար ե և ավելի տարածված:

Շենքը կառուցվում ե կիսով չափ հողի տակ կամ հողի յերեսին և այնպես, զոր նրա մեջ ջերմաստիճանը միշտ 0-ին մոտ լինի (պատրաստում են մեկուսիչներ, կը կնակի պատեր.

“Պային գատարկություններ, և այլն): Սառնություն առաջացնելու համար գործածվում ե հատուկ սաղցնող մեքենա, վոր կոչվում ե կոմպրեսոր, միացած այն խողովակների հետ, վորոնցով անցնում ե սառն սդայլն լուծույթը, վորը սառնություն ե հաջորդում էյութին:

Հյութի պահպանմանը հատկացված շենքում դասավորում  
են ընդունիչ փայտե չաներ, ցեմենտի ցիստերններ, ապակեալպատ  
աղումինի ամաներ:

Ամենից նպատակահարմարը հանդիմանում են փայտե չա-  
ները, վորովճեսեն նրանք լավ են պաշտպանում մշտական ջեր-  
մաստիճանը, բացի այդ, նրանք եժան են մյուս բոլորից, Զանի  
կամ ցիստելնների հատակին կան յերկու գալարքներ (զմեւնք),  
վորոնք բաղկացած են 2 դյույմանոց յերկաթյա հատուկ խառ-  
նուրդով պատած խողովակներից, վորոնք հատակից և պատերից  
վորոշ հետավորության վրա յեն դանդում:

Ցիստերնները պատրաստվում են 50,000 լիտր և ավելի տարրությամբ, գասափորվում են շաբաթով, իսկ գալարքի խողօքակները գտնվում են հաղորդակցության մեջ, թե մեկը մյուսի հետ և թե կոմպլիկությունի հետ:


Առաջին խողովակը միանում և մյուսի հետ, վոր գալիս և  
կոմպլեսորից և մյուս վերջին չանի գալարքի հետ, վերջին չանի  
խողովակը ևս միացած և կոմպլեսորի հետ:

Յերբ առաջին չափը լցված և հյութով, գործի յեն պցուժ  
կոմպրեսորը. յեփածքը սառեցրած և մինչ  $1\frac{1}{2}^{\circ}$  ցած դեղոյից  
(-0,5): Այս ջերմաստիճանի տակ հյութը զիռ ևս չի սառչում:  
Նրանից հետո գաղտարկեցնում են կոմպրեսորը և թողնում, վոր  
ջերմաստիճանը բարձրանա  $1\frac{1}{2}^{\circ}$ -ից բարձր (+0,5°). Այսպիսով  
կոմպրեսորն աշխատում ե վոչ թե անրնգանու, այլ ինչպես շվեյ-  
ցարական փորձն և ցույց տվել, շորը մեկ անգամ, կամ 3 որը մեկ  
անգամ: Սառեցումը մեծ քանակությամբ ջուր և պահանջում (մոտ  
3 խորանարդ մետր 200 լիտր հյութին): Հյութի խնամքը սահ-  
մանափակվում ե ջերմաստիճանին հետևելով: Զմռանը (հունվա-  
րին) հյութը մեկ ամանից մյուսն են թափում նատվածքից ա-  
զատվելու նպատակով:

Հաներից և ցիստերնաերից պետք է վերցնել ճիշտ այնքան  
կյութ, վորքան հարկավոր և շաբը լցնելու համար և զոչ ավելի:  
Սառեցման սիջոցն ունի մի շարք առավելություններ:

1) հետարապոր ւթյուն և տալիս հյութը պատրաստել ցանկացած քանակությամբ, 2) աշխատանքը պարզեցվում է, 3) քիչ աշխատող ձեռքեր և պահանջում, 4) ինքնարժեքը ցածր և լինում:

Խաղողի պահածո հյութը ուզածիդ չափ կարող է յերկար մնալ, առանց փշանալու։ Եթե կար մնալով նա նույնիսկ ավելի յե բավանում, ինչպես գինին։ Սակայն հեռու տեղ տանել կարելի յե միայն իզուտերմիկ վագոններով (այսպես են կոչվում այն վա-




#### Նկ. 11. Տանկաներ հյութի համալ

գոնները, վորոնք միապաղադ ջերմություն ունեն): Զմռանը հյութը կարող է սառչել, իսկ ամառը ջերմությունից նրա հատկությունները կարող են դեպի վատը փոխվել: Կա և փշացման վտանգ, վորովհետև հյութի մեջ համարյա միշտ (մանավանդ մըշակման նախկին ձեղբերի ժամանակ) մնում են առանձին դրոժային սնկիներ, վորոնք ջերմաստիճանի բարձրացման հետ կարող են ուժեղ կենսունակություն ցույց տալ:

Մենք շարունակ խոսում ենք դրոսայիս սպօռը ամսը,  
սակայն բացի նրանցից, խաղողի հետ կամ ողիք կարող են ընկ-  
նել ողիք միկրոսկոպիկ օրդանիքմներ—բակտերիաներ և բորբո-  
ւութիւններ։ Հիութի վոչ ռացիոնալ արտադրության ժամանակ, մանա-


վանդ, յեթե խաղողը վնասված ե և չի տեսակավորված, հյութով  
լի շնորհած հաճախ զարգանում են կանաչավուն թանաքի նման  
բորբոսներ: Յեթե հյութը մի քանի ամիս սառը շնորհում չի  
պահպած, շնի հատակին նստում են թեթե դունավորված գինե-



Նկ. 12. Տակառ ոդային ֆիլտրով (քամիչ):

Քարի ըյուրեղներ: Գինեքարը չի պղտորում հյութը, սակայն  
այդպիսի նստվածքները դուր չեն դալիս հյութը գործածողին:  
Պատերիկացիան կիրառելիս, հաճախ կիրառում են կրկնակի  
պատերիկացիա, վորը կրչվում ե տինդալիկացիա (դիտնական  
Տինդալի անունով): Դրա նպատակը հետեւյան ե. քանի վոր սո-  
վորական պատերիկացիան կատարվում ե համեմատաբար ցածր  
ջերմաստիճան պայմաններում, ապա վոչնչանում են միայն  
բողոք դրոժային անկերը և բորբոսանկերի թելերը,  
ստկայն սպորները չեն վոչնչանում: Դրոժային սնկերն այս պայ-  
մաններում սպոր չեն կազմում—սակայն բորբոսները սպորներ

կաղմում են: Վերջիններիս վոչնչացնելու համար առաջին պաս-  
տերիկացիայից հետո հյութով լի շները (մի որ և ավելի) թողնում  
են վորոշ ջերմության տակ, վորը նպաստում ե բորբոսի զար-  
գացմանը, իսկ հետեւյալ պատերիկացիան սպանում ե նաև այդ  
աճած սպորները:



Նկ. 13. ԷԿ ֆիլտրի միջով հյութի տրոտակումը տակառից

### ՓՐՓՐԱԿԱԼՈՂ ՀՅՈՒԹԵՐ

Բացի սովորական հյութերից, վորոնք շատ քիչ են տար-  
բերվում թարմ, նոր ճպմած խաղողի հյութից, պատրաստում են  
նաև փրփրակալող հյութեր: Փրփրակալող հյութերն ստացվում են  
ածխաթթվով հաղեցնելու գեպօվում, ինչպես կատարվում ե պտղա-  
ջերի արդյունաբերության մեջ, կամ արհեստական շամպայն  
պատրաստելիս: Ածխաթթուն, ինչպես ծծմբային գաղը, վաճառ-

վում և մետաղյա գլաններում, ուր նա խտացված, հեղուկ և դարձված (հեղուկ ածխաթթու): Հյութի խտացումն ածխաթթու գաղոփ, կամ գաղաճնացումը, կատարվում և հատուկ ապարատների ոգոնությամբ, վորոնք կոչվում են՝ սատուրատորներ:

ՀՅՈՒԹԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ԲՈԼՈՐ ԶԵՎԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Խաղողի հյութի մշակման տարրեր ձևերից արդյունաբերական արտադրության համար ամենից հարմարները հետևյալներն են՝

**1. Պատերիզացիայի միջոցը.—Հանդարտ թողնելու և ֆիտրացիայի միջոցով մաքրած հյութը պաստերիզացիայի յե յենթարկվում պաստերիզատորի մեջ (որինակ՝ «վելոկս» սիստեմի) և լցվում է հականեխված տակառների մեջ գինեցարն անջատելու նպատակով։ Ցուրտ շենքում պահելուց հետո կատարվում է կըրկնակի պաստերիզացիա շների մեջ։**

**2. Սառեցման միջօքը հականեխող ֆիլտրի («Ե. Կ.») գործածությամբ:** Այստեղ հնարավոր են այլաձեռություններ. հյութը սոսնձվում և ֆիլտրվում և սովորական (որինակ՝ ազբեստյա) ֆիլտրով ու հականեխող ֆիլտրով («Ե. Կ.») և լցվում ե հականեխոված տակառները: Նստելուց հետո նույն հականեխող ֆիլտրով լցվում ե շները: Ֆիլտրված հյութն անցնում ե ընդունարանները, գորոնք սառեցվում են մոտավորապես զերո շներատիճանի: Պետք յեղած զեպքում հյութը «Ե. Կ.» ֆիլտրով անցկացնելուց հետո լցվում ե շների մեջ:

Պատերիզացիայի միավորյալ յեղանակ և «Ե. Կ.» ֆիլտրով հականեխում, նաև տակառներում կամ չաներում և ապա շշերում:

3. Ն ծմբային բրկաւու գործադրված յեղանակ.—Խաղողի հյութը  
ծծմբային թթվով պարզեցվում է, սովորական ֆիլտրով ֆիլտրվում  
և անցնում տակառները, այնտեղ պահպանվում են, վորի ըն-  
թացքում ընկնում են գինեքարը և աղատվում ծծմբային թթվու-  
տից (վերը նկարագրված ապարատի մեջ)։ Դրանից հետո կամ  
շերում պատճերի կացիայի յե յենթարկվում, կամ շերի մեջ ե  
բաց թողնվում հականեխող ֆիլտրի միջոցով։ Այս միջոցը հար-  
մար ե նրանով, վոր հնարավոր ե գործադրել ամեն սարքավոր-  
ման ժամանակ, բայց հյութի վորակն ու հատկությունները  
վորոշ չափով ընկնում են:

Նրա կատարելագործումը համարվում և ծծմբային թթվուտի հեռացումով վակուում ապարատներում (ասինքն, ողբ նորոգ-

բած ապարատներում), կամ թե ոդի փոխարեն հյութի մեջ մըս-  
ցնում են ծծմբային թթվուտի աղատված ածխաթթու, զորի  
պատճառով հյութը չի յենթարկվում ոքսիդացիայի:

Բացի հեշտակ միջոցներից զիրակում և այլ գործեր, սրինակ՝ հյութի հագեցումը ածխաթթու գաղով (8 մթնողորտային ճնշման տակ): Սրանցից մի քանիսն արդեն կիրառվում են, մյուսները յենթափա յեն մշակման:

Հյութը պահածողաքանիլու ինչպիսի միջոց ոլ զրբառութեան, նախորոք հարկավոր և ընդհանուր ոպերացիաներ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Ստացվող խաղողը պետք ե անմիջապես վերամշակվի, դրա  
համար նա մտնում ե աղիչի, ալելի լավ ե՝ եղբայրարի մեջ,  
այսինքն՝ այն մեքենայի, զորն անջատում ե չանչը, վորը  
կարող ե հյութին հաղորդել անդուրեկան ճանչի համեն Այս-  
տեղից արորված խաղողը տրվում ե մամուլին և լավ հյութ  
ստանալու համար վերցնում են ինքնիրեն հոսած հյութը,

կավ հյութ ստանալու անհրաժեշտ պայման և լավողը  
լավ վիճակը։ Հաս հնարավորության խաղողը պետք և լինի  
չմասաված, առանց արորվելու, հեռու տարածություններից լավ և  
փոխադրել կողովներով։ Կարենը և նաև, վոր խաղողը տաք չկինի,  
վորովհետեւ տաք հյութը դժվար է մշակել, նա արագ խմորվում  
է, Այս նպատակով խաղողը պետք և հավաքել որվա ցուրտ  
ժամերին։

## ՏԵՇԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարկավոր ե, զոր հյութերն իրենց նպատակին ծառայեն։  
Կարող են լինել 2 տեսակ հյութեր - շատ քաղցր և քիչ թթու-  
(այսպիսի հյութեր գլխավորապես ստացվում են հարավում, մաս-  
նավորապես Հ. Ա. Խ. Հ.-ում) և չափավոր քաղցրության, ավելի  
թթվաշ: Թեև պահանջում են, զոր հյութերը շատ վիտամիններ  
պարունակեն, սակայն այդ կարծիքը դժվար թե ունենա այդպիսի  
նշանակություն: Հյութի գլխավոր նշանակությունն այն ե, զոր  
մեջ ունենա շաքար, թթուներ և հարկավոր հանքային նյու-  
թեր, Վիտամիններով հարուստ են այլ նյութերը, վորոնք կարող  
են գործ ածել խաղողի բժշկության հետ միասին: Այն խաղողը,  
վորից պատրաստվում ե պահածո հյութ, պետք ե լինի հասունա-  
ցած և առողջ: Այս պայմաններում ստացվում ե առանձին մա-

սերի ամենալավ հարաբերությամբ հյութ։ Այդ դեպքում հյութն ավելի լավ է յուրացվում որպանիղմի կողմից և ավելի դեռքեւ կան համ ե ունենում։

Խաղողի զանագան տեսակներից պահածո հյութեր պատրաստելու համար ավելի հարմար են սեղանի տեսակները, քան գինու ԶԵ վոր խաղողի հյութը փոխարինում ե պտղի գործածությանը, և ենց այդ պատճառով ել սեղանի տեսակներն ավելի լավ են: Մասնավորապես ՀՍԽՀ Ցերեանի գինեգործական կայանը նշել ե հյութի համար հարմար հետևյալ տեսակները:

Խարժի

Uebersicht

卷之三

—P.L.—P

Կամաց

Հայտ խաղողի տեսակների սըա հյութը կարելի յէ բաժանել  
3 կարգի.

1)  $\beta\beta_{\text{пк}} \zeta_{\text{пк}} \beta_{-}$ , шашка, 5 кг, № 10, 120/-

2) չափավոր քաղցր 15-120% թթվութ. 10-120%.

3)  $\text{e}^{\omega_1 z}$   $\text{e}^{\omega_2 z}$   $\text{e}^{\omega_3 z}$   $\text{e}^{\omega_4 z}$   $\text{e}^{\omega_5 z}$   $\text{e}^{\omega_6 z}$   $\text{e}^{\omega_7 z}$   $\text{e}^{\omega_8 z}$   $\text{e}^{\omega_9 z}$   $\text{e}^{\omega_{10} z}$   $\text{e}^{\omega_{11} z}$   $\text{e}^{\omega_{12} z}$   $\text{e}^{\omega_{13} z}$   $\text{e}^{\omega_{14} z}$   $\text{e}^{\omega_{15} z}$   $\text{e}^{\omega_{16} z}$   $\text{e}^{\omega_{17} z}$   $\text{e}^{\omega_{18} z}$   $\text{e}^{\omega_{19} z}$   $\text{e}^{\omega_{20} z}$   $\text{e}^{\omega_{21} z}$   $\text{e}^{\omega_{22} z}$   $\text{e}^{\omega_{23} z}$   $\text{e}^{\omega_{24} z}$   $\text{e}^{\omega_{25} z}$   $\text{e}^{\omega_{26} z}$   $\text{e}^{\omega_{27} z}$   $\text{e}^{\omega_{28} z}$   $\text{e}^{\omega_{29} z}$   $\text{e}^{\omega_{30} z}$   $\text{e}^{\omega_{31} z}$   $\text{e}^{\omega_{32} z}$   $\text{e}^{\omega_{33} z}$   $\text{e}^{\omega_{34} z}$   $\text{e}^{\omega_{35} z}$   $\text{e}^{\omega_{36} z}$   $\text{e}^{\omega_{37} z}$   $\text{e}^{\omega_{38} z}$   $\text{e}^{\omega_{39} z}$   $\text{e}^{\omega_{40} z}$   $\text{e}^{\omega_{41} z}$   $\text{e}^{\omega_{42} z}$   $\text{e}^{\omega_{43} z}$   $\text{e}^{\omega_{44} z}$   $\text{e}^{\omega_{45} z}$   $\text{e}^{\omega_{46} z}$   $\text{e}^{\omega_{47} z}$   $\text{e}^{\omega_{48} z}$   $\text{e}^{\omega_{49} z}$   $\text{e}^{\omega_{50} z}$   $\text{e}^{\omega_{51} z}$   $\text{e}^{\omega_{52} z}$   $\text{e}^{\omega_{53} z}$   $\text{e}^{\omega_{54} z}$   $\text{e}^{\omega_{55} z}$   $\text{e}^{\omega_{56} z}$   $\text{e}^{\omega_{57} z}$   $\text{e}^{\omega_{58} z}$   $\text{e}^{\omega_{59} z}$   $\text{e}^{\omega_{60} z}$   $\text{e}^{\omega_{61} z}$   $\text{e}^{\omega_{62} z}$   $\text{e}^{\omega_{63} z}$   $\text{e}^{\omega_{64} z}$   $\text{e}^{\omega_{65} z}$   $\text{e}^{\omega_{66} z}$   $\text{e}^{\omega_{67} z}$   $\text{e}^{\omega_{68} z}$   $\text{e}^{\omega_{69} z}$   $\text{e}^{\omega_{70} z}$   $\text{e}^{\omega_{71} z}$   $\text{e}^{\omega_{72} z}$   $\text{e}^{\omega_{73} z}$   $\text{e}^{\omega_{74} z}$   $\text{e}^{\omega_{75} z}$   $\text{e}^{\omega_{76} z}$   $\text{e}^{\omega_{77} z}$   $\text{e}^{\omega_{78} z}$   $\text{e}^{\omega_{79} z}$   $\text{e}^{\omega_{80} z}$   $\text{e}^{\omega_{81} z}$   $\text{e}^{\omega_{82} z}$   $\text{e}^{\omega_{83} z}$   $\text{e}^{\omega_{84} z}$   $\text{e}^{\omega_{85} z}$   $\text{e}^{\omega_{86} z}$   $\text{e}^{\omega_{87} z}$   $\text{e}^{\omega_{88} z}$   $\text{e}^{\omega_{89} z}$   $\text{e}^{\omega_{90} z}$   $\text{e}^{\omega_{91} z}$   $\text{e}^{\omega_{92} z}$   $\text{e}^{\omega_{93} z}$   $\text{e}^{\omega_{94} z}$   $\text{e}^{\omega_{95} z}$   $\text{e}^{\omega_{96} z}$   $\text{e}^{\omega_{97} z}$   $\text{e}^{\omega_{98} z}$   $\text{e}^{\omega_{99} z}$   $\text{e}^{\omega_{100} z}$

Հայաստանի հյութերի կազմությունը հետևյալն է (1931 թ.)

Մի լիտր հյութը պարունակում է (գրամներով)

Փակութեակներ		Համար	Հայոց բնակչութեան պահանջական գումար	Հայոց բնակչութեան պահանջական գումար	Արդյունքի պահանջական գումար	Արդյունքի պահանջական գումար
Խարջի		21/IX	238,1	5,42	1,99	1,56
		7/X	245,1	6,02	1,94	1,46
Սպասի		23/IX	186,5	3,90	2,66	0,62
		7/X	208,3	3,76	2,04	0,68
Ճիւտը		24/IX	243,2	5,40	2,04	1,18
Առկյարի		3/IX	168,9	6,20	1,57	0,94
Սև խաղող		28/IX	236,7	6,40	2,40	1,46
Վարդաբույն մուսկատ		13/IX	195,3	5,79	2,23	0,60
Սպիտակ մուսկատ	16/IX	219,2	5,10	2,32	1,00	
	29/IX	186,5	7,60	2,30	2,12	
	25/IX	204,9	4,00	1,72	1,00	

կենտրոնական սանիտարական լաբորատորիայի հետազոտության համաձայն, Հայրուժաքետառի հյութերը (վոսկեգույն և սաթագույն կարմիր) ունեն մի լիտրում շաքար՝ 234,12—235,00, թթվություն՝ 4,91—5,03, գինեքար՝ 1,98—1,92, խնձորաթթու՝ 9,52—2,64, հանքային նյութեր՝ 4,27—4,29, սպիտակուցային նյութեր՝ 1,17—1,20 (աղոտով), գլխավոր հանքային նյութեր կալի (կալիի թթվութ)՝ 2,82—2,87 և ֆոսֆոր՝ (ֆլեփ) 5,45—0,45:

卷之三

Այս գրքի վերջաբանում կարելի յէ ասել հետեւյալը. պահածո գարձրած խաղողի հյութի ոգտագործումը խաղողի ոգտագործման լավ յեղանակներից մեկն եւ չյութերը, ավելի քան խաղողի այլ սթերքները, իլրենց կազմությամբ և հատկություններով լուսնում են թարմ խաղողին:

Նրանք համեղ և սննդարար խմիչքներ են և, բացի դրանից  
առևէ առևտիչ նշանակությունն ունեն:

Այդ հյութերից կարելի յե ունենալ ամեն տեղ, վողջ տարին  
ապառատել և այլ բաներ (ժելե, կիսել, կանֆետ):

մշակված ե, վոր լրիվ հնարավորություն կա պատրաստել խոշոր արտադրական մասշտաբով։ Հայաստանը, վորն առաջինը Խ. Միության մեջ սկսեց հյութերի արտադրությունը՝ հրաշալի եկապորտային գինու հետ միասին մեր արտադրական կենտրոնները կարող ե ապահովել նաև բարձր վորակի և եժան գնով խաղողի հյութով։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Խաղողահյութի և խաղողի սննդային ու համի նշանա-	
կությունը	3
Խաղողի հյութի սննդային և համի հատկությունները	4
Խաղողը վորպես բուժիչ միջոց	6
Բժշկությունը խաղողով	7
Խաղողի հյութի խմորումը	8
Ինչպես ե պահպանվում հյութը խմորումից	12
Հյութերի պահածո պատրաստելու սառը միջոցը	22
Հյութի սառցնելը	31
Փրփրակալող հյութեր	35
Հյութի պատրաստման բոլոր ձևերի ընդհանուր ակնարկ	36
Ընդհանուր կանոններ	37
Տեսակների ընտրությունը	37

«Ազգային գրադարան



NL0289758

19.677

503

ԳԻՆ Ե 75 ԿՐՊ.



Проф. И. И. ПРОСТОСЕРДОВ

ВИНОГРАДНЫЙ СОК

СЕЛЬХОЗГИЗ

1984

ЭРИВАНЬ